

280 f

u. f

243  
7-21

61

## ՊԱՀԾՈՅ

Ի ՊԱՏԻՒ ՄՐՑԻՆ ՅԻՍՈՒՄԻ

ՅԵՒ ԱՉՆՈՒՄ

ՈՒՐՅԵԹՈՒ ԿԵՄ ԿԻՒՐԱԿԵՒ

ԱՄԵՆԵՑՆ ԱՄՍՈՅ

## ԼԻՏԱՆԻԱ

Տէր ողորմեաց :  
Քրիստոս ողորմեաց :  
Տէր ողորմեաց :  
Քրիստոս լուր մեզ :  
Քրիստոս անսա մեզ :  
Հայր Երկնաւոր Աստուած . ողորմեաց  
մեզ :  
Որդի Փըկեչ աշխարհի Աստուած . ո-  
ղորմեաց մեզ :

2 280-44 41052 - սկ.

Հոգիդ սուրբ Աստուած, ողբըմնաց մեզ,  
Սուրբ Երրորդութեան մի Աստուած,  
ողբըմնաց մեզ:

1. Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօր  
յաւիտենականին,
2. Սիրտ Յիսուսի, որ Հոգւով  
սրբով կերպարանեցար յար-  
գանդի կուսին Մարեմայ,
3. Սիրտ Յիսուսի, միաւ որեալ  
էութեամբ հնդ բանին Աս-  
տուծոյ,
4. Սիրտ Յիսուսի, անհուն մեծ-  
վայելչութեան,
5. Սիրտ Յիսուսի, սուրբ տաճար  
Էռատուծոյ,
6. Սիրտ Յիսուսի, տապանակ  
Բարձրելոյն,
7. Սիրտ Յիսուսի, սուն Տեառն  
եւ գուռն Երկնից,
8. Սիրտ Յիսուսի, վառեալ հնոց  
ընկերսիրութեան,
9. Սիրտ Յիսուսի, խորան ար-  
դարութեան եւ սիրոյ,
10. Սիրտ Յիսուսի, լուսալ բարու-  
թեամբ եւ սիրով.
11. Սիրտ Յիսուսի, խորք ամե-  
նայն առաքինութեանց,
12. Սիրտ Յիսուսի, արժանի ամե-  
նայն գովութեան,
13. Սիրտ Յիսուսի, իշխանութեան  
կենդրու յասուի սրբով:

Առողջութեան


Ն թի

14. Սիրտ Յիսուսի, յորում ծած-  
կեալ կան ամենայն գանձը  
իմաստութեան եւ գիտու-  
թեան,
15. Սիրտ Յիսուսի, յորում բնա-  
կեաց ամենայն լրումն Աս-  
տուծութեանն,
16. Սիրտ Յիսուսի, ընդ որ հա-  
ճեցաւ Հայր,
17. Սիրտ Յիսուսի, յորոյ ի լրու-  
թենէն ընկալաք մեք ամենէքին,
18. Սիրտ Յիսուսի, ցանկալին  
ըլրոցն յաւիտենականաց,
19. Սիրտ Յիսուսի, համբերող եւ  
բազումողորմ,
20. Սիրտ Յիսուսի, առատաձեռն  
առ ամենեսին որ կարդան առ  
քեզ,
21. Սիրտ Յիսուսի, աղբիւր կե-  
նաց եւ սրբութեան,
22. Սիրտ Յիսուսի, քաւութիւն  
վասն մեղաց մերոց,
23. Սիրտ Յիսուսի, զեղեալ նա-  
խատանօք,
24. Սիրտ Յիսուսի, բեկեալ վասն  
մերց անօրէնութեանց,
25. Սիրտ Յիսուսի, հնազանդ  
մինչեւ ի մահ, [գաւ,
26. Սիրտ Յիսուսի, լոցեալ տի-  
թիւնաց միմիթարութեան,
27. Սիրտ Յիսուսի, աղբիւր ամե-  
նայն միմիթարութեան,

Առողջութեան

Ն թի

2001  
24262-61



28. Սիրտ Յիսուսի, կեանք եւ յառութիւն մեր,  
 29. Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն եւ հաշոռութիւն մեր,  
 30. Սիրտ Յիսուսի, զո՞հ մեղաւոռ լաց,  
 31. Սիրտ Յիսուսի, փրկութիւն յուսացելոց ի քեզ,  
 32. Սիրտ Յիսուսի, յաս ննջեցելոց ի սէր քո,  
 33. Սիրտ Յիսուսի, քաղցրութիւն ամենայն սրբոց,

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղաշխարհի, խնայեա ի մեզ Տէր։  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղաշխարհի, անսա մեզ Տէր։  
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղաշխարհի, ողորմաց մեզ։  
 Յիսուս հեղ եւ խնարհ Արտիւ, Արա զսիրտ մեր ըստ քում Արտի։

### Ա Դ Օ Թ Ք

Ամենակալ յաւիտենական Աստուծած, հայեաց ի Սիրտ Որդւոյ քոյ սիրելոյ եւ ի գովութիւնս եւ հատուցմունս, զորս մատուցանէ քեզ ի կողմանէ մեղաւորաց, եւ որոց հայցենն զողորմութիւն քո՞ հաճեաց չնորհել նոցա թուղութիւն յանուն Որդւոյ քոյ Յիսուսի

Աստուծած

Նկար

Քրիստոսի, որ կենդանի է եւ թագաւորէ ընդ քեզ եւ ընդ սրբոյ Հոգւոյն Աստուծած յամենայն յաւիտեանս . ամէն :

(1) Քահանայուղութ Ալեան ժ. 9. շ. Ապրիլ 1899. ըստ քահանայուղութ 300 առաջին, ըստ գահական ասիցիւն զի վահանակայ եւ զվարիւ . հարիւ է Գրէեցուցանել ըստը . եւ հաքաց նախշեցաւ :)

### Ա Դ Օ Թ Ք

Բաղմագութ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ նորանշան մարդասիրութեամբ քով բացեր զանսպառ զանձս աստուծեղէն Սրտի քոյ առաջի սրբոյ Եկեղեցւոյ, սուր մեզ աղաչեմք, զի սիրեցուք զեեզ յամենայն սրտէ, եւ հատուցուք քեզ փոխարէնս ընդ ամենայն արհամարհանաց, զորս կրտաց եւ կը հանապազօր Աիրտ քո վշտագին յապաշնորհ մարդկանէ : Որ կենդանի ես եւ թագաւորես ընդ Հօր եւ սրբոյ Հոգւոյն յաւիտեան . ամէն :

### Աշեն Խորելոյ Բուռնեիւն :

Ո՞վ աստուծածեղէն Սիրտ Յիսուսի, ահա կամք խոնարհեալք ի ծունկս առաջի քո, եւ նուիրեմք քեզ զամենայն երկրպագութիւնս, զգովութիւնս եւ զփառաւորութիւնս անարատ Արտին Մարեմայ Աստուծածամօր, եւ ամենայն հրեշտակաց եւ սրբոց երկնից եւ Եկեղեցւոյ սրբոյ : Ցանկամք չերմ

Եռանդմամբ, զի ամենայն արարածք  
երկիր պագցեն մեծվայելութեան քում  
եւ փառաւորեսցեն զքեզ ընդ ընաւ  
յաւիտեանս: Սոյնպէս գոհանամք զքեն  
վասն ամենայն երախտեաց բնութեան,  
չնորհաց եւ փառաց, որբ ի քեն յանըս-  
պառ աղբերեկ բարեսց բխեն անպա-  
կաս: Քայլոր Յիսուս, միաւորեալք ընդ  
արարածս որբ սիրեն զքեզ, աղալեմք  
զի չնորհեսցես թողութիւն ամենայն  
անհաւատութեան, ապախտաւորու-  
թեան, ցյառութեան, մեղկութեան եւ  
անհամար թշնամանացն որ քեզ տրւ-  
եալ լինին ի մարդկանէ, մանաւանդ  
յամենասուրբ խորհրդեան: Ընկալ  
մարդասիրութեամբ փոխանակ այնր  
ամենայնի զմեր հաւատս, զայս եւ  
զուր, եւ լուր գժութեամբ աղա-  
չանաց մերոց:

Ո՛վ աստուածեղէն Սիրտ Յիսուսի,  
ողորմեաւ Եկեղեցւոյ քում սրբոյ, ա-  
մենայն հոգեւոր եւ աշխարհական իշ-  
խանութեանց եւ ամենայն հաւատա-  
ցելոց քոց: — Աղալեմք:

Լուր մեզ, Տէր:

Ո՛վ աստուածեղէն Սիրտ Յիսուսի,  
ողորմեաւ ամենայն ընկերաց Եղբայրու-  
թեանս, որ նուիրեալս է ի փառաւու-  
րել զքեզ: — Աղալեմք:

Լուր մեզ, Տէր:

Ո՛վ աստուածեղէն Սիրտ Յիսուսի,  
քեզ յանձն առնեմք զամենայն զա-  
ռանձինն իղձս եւ զհայցուածս մեր:  
— Աղալեմք:

Լուր մեզ, Տէր:

Ո՛վ աստուածեղէն Սիրտ Յիսուսի,  
ողորմեաւ ամենայն հաւատացեալ ննջե-  
ցելոց, մանաւանդ այնոցիկ որ ի կեանս  
յայսմիկ ընկերք էին Եղբայրութեանս:  
— Աղալեմք:

Լուր մեզ, Տէր:

### Ա Դ Օ Թ Ք

Ո՛վ աստուածեղէն Սիրտ Յիսուսի,  
դու մատուցեր զանձն քո՞ Հօրն եր-  
կնաւորի պատարագ ի վերայ խաչի ի  
փրկութիւն մարդկան, եւ զնոյն պա-  
տարագ նորոգեօ զօրհանապաղ ի  
նուագս անթիւս ի վերայ սեղանոց մե-  
րոց: տուր ի նուէրս այս անսահման  
սիրոյ լիցի ամենեցուն յօդուտ:

Դահեա, պաշտպանեա եւ ուղեա  
զեկեղեցի քուրբ եւ զՀովուապեա  
սորա: Միաւորեալ ընդ Հովուապեալին  
զհովիւս, եւ ընդ հովիւսն զերիցունս,  
եւ ընդ Եղիցունսն զամենայն հաւա-  
տացեալս, զի ամենեքին ի մի շինուած  
կատարեալ լիցուք. հիմեալք ի Գլուխին  
անկեան ի Յիսուս Քրիստոս, եւ հաս-  
տատեալք ի վերայ հիման առաքելոց  
եւ Վիվին Պետրոսի: Ի բաց արա յԵ-

կեղեցւոյ քումէ զուսմօւնս սառութեան,  
զհերձուած, զգայթագութիւնս, զհաւ-  
լածանս եւ զթուլութիւն ի ծառայու-  
թեան քում:

Պահեա զպետոյ. զիշխանութիւնս եւ  
զառաջնորդս, զի իմաստութեամբ քով  
լուսաւորեալք ողջամիտ վարդապե-  
տութեամբ առաջնորդեսցեն չնազան-  
դելոց իւրեանց ի խաղաղութիւն, ի  
միաբանութիւն, յարդարութիւն, ի  
սէր, ի ժամանակեան յաջողութիւն եւ  
ի յաւիտենական փրկութիւն:

Հնորհեա աւագաց զշնորհս քո, զի  
ի սրբութեան զարդացուցեն զհպա-  
տակս իւրեանց ի քո փառս եւ յան-  
ձանցն իսկ ի փրկութիւն. եւ գործովք  
առաքինութեանց արասցեն զնոսսա յոր-  
դիս Աստուծոյ եւ ի ժառանգս ար-  
քայութեան երկնից:

Տուր եւ հպատակաց հյութիւն,  
յարդութիւն, շնորհակալութիւն եւ  
սէր առ աւագս իւրեանց, զի աստուա-  
ծելէն օրհնութիւնդ քո զեղուցու ի  
նոսսա առատապէս:

Հնորհեա եւ եղարցն գործակցաց  
հաւատարմութիւն եւ ճշգութիւն ի  
կատարման պաշտամանց իւրեանց,  
համբերութիւն եւ խոնարհութիւն,  
սրբական վարս եւ խնդութիւն ի Հո-  
գին սուրբ:

Պահեա զանմեղս, զօրացո զապաշ-  
խարողս, զարձո զմեղաւորս, խոնար-  
հեցո զթշնամիս անուան քոյ եւ մոյժ  
զնոսսա ի գաւիթ ոչխարաց քոյ. տա-  
րածեա զփառոս աստուածելէն անուան  
քոյ եւս քան զեւս. զի ամենայն մար-  
դիկ ի գիտութիւն ճշմարտութեան ե-  
կեսցեն եւ կեցցեն:

Եւ զարձեալ քեզ յանձն առնեմք  
զամենան մարդիկ. ոյդրմեա հաւատա-  
ցեալ ննջեցելոց, մանաւանդ հարց եւ  
մերձաւորաց մերոց, բարեկամաց եւ բա-  
րերարոց, եւ այնոցիկ զրոս ոչ ոք ա-  
ռանձինն յիշառոակէ, եւ տուր մեղը  
ժամանել ընդ նոսսա ի տեսանել զքեզ  
եւ երանելի լինել յաւիտեանս: Որ  
կենդանին եւ եւ թագաւորես ընդ Աս-  
տուծոյ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Ե Բ Գ

Զօրիտ սուրբ եւ քաղցր Յիսուսի  
Երգէ սէրն յիմ սրտի,  
Ընդ ամսս ամենայն երկնից  
Հնչէ ձայն ցնձութեան:

— Օրհնեալ լիցի գովեալ միշտ  
ընդ բնաւ ընդ ժամանակս  
Սիրտ սուրբ Փրկչն Յիսուսի  
Այժմ եւ միշտ յաւիտեանս: (ԵՒ.)

Ար վասն իմ, սիրտ Յիսուսի,  
Ի գութս քո արտմեցար  
Եւ վասն իմոց յանցանաց  
Գեղարդեամբ խոցեցար:  
— Օրհնեալ . . . :

Սիրտ սուրբ, յորմէ յորդառատ  
Արիւն եւ ջուր հոսեաց  
Զիարդ ըզնորհս յորդաբուղիս  
Զեղուս ինձ ի խաչդ:  
— Օրհնեալ . . . :

Սիրտ, որ բոցով ջերմաջերմ  
Վառեալ միշտ բորբոքիս.  
Քեւ ինձ բընաւ պարդեւի  
Որում անձն իմ ցանկայ:  
— Օրհնեալ . . . :

Սիրտ Յիսուսի, զայս միայն  
Խնդրեմ աստ ես ի քէն  
Ի մէջ սրտիդ ունել ինձ  
Տեղի, կայս եւ հանգիստ:  
— Օրհնեալ . . . :

Անդէն ի վէրս սրտի քո  
Լիցի հանգիստ հոգւոյս  
Ի գեւրութեան եւ ի վիշտս  
Գոշեցից ընդ բնաւ միշտ:  
— Օրհնեալ . . . :

Յորժամ զաշօրս պատիցի  
Խաւար եւ մառախուղ  
Ի մեռանելն առացից  
Սիրտ Փըրկչիս քո եմ ես:  
— Օրհնեալ . . . :

Նուիրումն անծին առ ամենա-  
սուրբ Սիրտն Յիսուսի:

(Տ Մարտ ։ Մարտ ։ Ալեքսանդր)

Ես Ա. Ա. սրբեմ եւ մատուցանեմ  
զանձն իմ, զկեանս, զգործս, զնեցու-  
թիւնս եւ զվիշտս իմ ամենասուրբ  
Սրբին Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
տոսի, առ ի վարել ծախել յայսմհետէ  
զանձն իմ ողջոն ի սէր եւ ի փառաւո-  
րութիւն նորին: Այս է հաստատուն  
եւ անփոփոխ յառաջադրութիւն իմ,  
նմա բոյրոսվին սեպհական լինել, առ-  
նել զամենայն առ սէր նորա եւ ի բաց  
կալ, հրաժարել յամենայն սրտէ յայնմ  
ամենայնէ որ ոչ ըստ նորա հաճոյից  
իցէ: Արդ ընտրեմ զքեզ, ով ամե-  
նասուրբ Սիրտ, ի մի միայն նիւթ սիրոյ  
իմոյ, ի պահպանութիւն կենաց իմոց,  
յամուր զգուշութիւն իմոյ փրկու-  
թեան, նեցուկ իմում տկարութեան  
եւ յողդողդութեան, ի փոխարէն հա-  
տուցումն ամենայն պակասութեանց

103

Համօքէն կենաց իմաց , եւ յամուր առ պաւէն ի ժամու մահուան իմայ: Ով Սիրտ քաղցրութեան եւ բարութեան, լըր դու արդարութիւն իմ առաջի շօր Աստուծոյ երկնաւորի, եւ գարձն յինէն զպատու հաս արդար բարկութեան նորա: Ով Սիրտ սիրոյ, ի քեզ հաստատեմ զամենայն վատահութիւն իմ, կասկածեմ ընաւին ի չարութենէ եւ ի տկարութենէ իմի, սակայն յուսամ եւս զրնաւ ի քումէ բարութենէ: Ի բաց արա յինէն եւ ջնջեա զամենայն, որ ոչ միանգամայն բատ քոց հաճոյից իցէ, կամ ընդ որ գժկամակ լիցի երւրէք: Այնպէս իմն ի խոր գրոշմեա զուր քուրքի ի սրտի ի հում, զի մի երբեք մոռացայց զքեզ եւ մի ընաւ մեկնեցայց ի քէն: Երդմնեցուցանեմ զքեզ ի քունքաւ բարութիւն՝ ի խոր գրոշմել զանուն իմ ի քեզ, զի կամիմ եթէ ամենայն երանութիւն եւ ընաւ փառք իմ լիցին կեալ եւ մեռանել ի ծառայութեան քում. ամէն:

(Ներու. 300 սարգ. Լեռն. Ժ.Գ.)



0015188

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0015188

100 7A